

կ'ուզէ ենթադրել թէ պատկերեանք կը պատկա-
նին հայոց այն ցեղին՝ որոնք ըստ Մովսէս Խո-
րենացիի Արշակի օրերուն վանանդայ շրջանը
հաստատուեցան իրենց վղրնդուր պետի հետ:
(Dr. E. Tachella — Le Muséon et la revue
des Religions, N. 1, 2, 3. 1897 — Les armé-
niens Pauliciens et les modernes bulgares
catholiques de la Philippoplitana):

Նիկեփորի յաջորդ մեծահամբաւ Յովհաննէս
Չմշկիկ հայազգի կայսրը (969—976) դարձեալ
հալածել սկսաւ պաղղկեանք ու մանիքեանները
և մեծ խումբերով տարազրել գանձոք: Ժ գա-
րուն արդէն Թրակիոյ մէջ կար աւելի քան 12
հազար հայ գաղութ մը: Բռնութեամբ և կամ
խոստումներով ու փառք պատիւով գրաւուած
այս հայ գաղթականներուն մէջ կային թէ յու-
նասէրք ու թէ յունատեացք ալ:

Երբ աւանդուած է նաեւ որ «պուլկարաց Չար
և հոովմայեցոց տիրապետ» Չար Սիմէոն Վե-
լիքի (մեծ) երկրորդ կինը քոյրն էր Սուրբբալի
Գէորգ հայ իշխանին: Չար Սիմէոնի մահէն վերջ
իր երկրորդ ու հայազգի կնոջմէն ունեցած որ-
դին Չար Բեթէր գահակալեց: Այս խաղաղասէր
Թագաւորը գահ բարձրանալուն պէս ուզեց իր
երկրին խաղաղութիւնը տեւականացնել, և առ
այս իր մօրեղբայրը Գէորգ Սուրբբալին և Քա-
լոթիոսէ անուն կրօնաւորը զրկեց Բիզանդիոն,
որպէսզի բիզանդական արքունիքէն իրեն կին
մը գտան: Բռնամտո կայսեր արքունիքը սիրով
ընդունեց Սուրբբալին որ յաջողեցաւ Մարիամ
կամ Մարիանէ իշխանուհին պուլկարաց Չարին
կնութեան տանել: Այսպէս 40 տարուան խա-
ղաղութիւն մը տիրեց երկրին վրայ: Ասիկա ար-
դարեւ օրհնութիւն մ'եղաւ երկրին տարաբախտ
շինականին համար, որ գրեթէ տասը տարին
անգամ մը պատերազմի արհաւիրքներուն տակ
տառապիլ ստիպուած էր:

Յովհաննէս Չմշկիկի գահ բարձրանալէն տարի
մ'առաջ մեռաւ Չար Բեթէր — պուլկարաց Ա-
շոտ ողորմածը, և սուրբերուն կարգը գատուե-
ցաւ իբր «Սվիտեթիա Բեթէր Վելիք» (Սուրբ
Պետրոս Մեծ). (Հմտ. Վահրամ Արծրունի, «Հայք
ի Պուլկարիա» — Այպագայ՝ ձեռագիր ամսա-
թերթ, Ֆիլիպք 1916, Տարի Ա. Թիւ 6): Վ.
Արծրունի սապոյոյցներ ունէր նաեւ կարծելու
թէ Չար Եիշման ալ եղած էր հայ ծագմամբ
պուլկար ձար մը: Չար Եիշմանի նախահարք
կը կոչուէին «Գրաֆի որդի» կամ «Կոսմածագ»
տիտղոսով: «Գրաֆ», «Կրաֆ» բիզանդական
աստիճան մըն էր, ինչպէս որ լատին կամ բիւ-
զանդական աստիճաններ էին նաեւ «կոմս»,
«գուքս» կամ «պատրիկ» տիտղոսները: «Գրա-
ֆութիւն» կամ «կրաֆութիւն» կոչուող առա-
ւաստեութիւններ կային բիզանդական կայ-
սրութեան զանազան շրջաններուն մէջ: Իսկ Թ.
դարուն՝ գուցէ անկից ալ առաջ, կար հայ իշ-
խանապետութիւն մը Բիզանդիոնի հարկատու
Պուլկարի շրջակաները (Տեղեկագրութիւն Գր.
Եղբ.):

Հոն այս հայ գաղութը ունէր իր եկեղեցիներ-
ըր, մենաստանները, առաջնորդները, գրիչները,

որոնք Թրակիոյ մէջ՝ պանդխտութեան գիրկն
իսկ չէին մտնար Սահակի ու Մեսրոպի տա-
ներն ու իրենց պանծալի հայրենիքը: Քրիս-
տոսի 1000 թուին Կիրակոս մը կը գրէ աւե-
տարան մը «ի գաւառին Մակեդոնիոյ ի քաղա-
քին որ կոչի Անդանապոլիս». ձեռագրին տէրն
է Տէր Յովհաննէս «պոստուպաթուր»: Վենետիկի
Միքիթ. ճոխ մատենադարանի մէջէն անուած
լոկ նմոյշ մ'է այս արդեօք ինչէր կարելի պիտի
ըլլայ գտնել հոս ու հոն մանրակրկիտ խուզար-
կութեամբ:

976 թուին գահ բարձրացաւ Վասիլ Բ. Ար-
շակունին, որ ծնած էր Մակեդոնիոյ Արքիա-
նուպոլիս քաղաքը: «Վասիլ ծագմամբ հայ է
Մակեդոնիա ծնած» կը գրէ Լարենտիանոս (էջ
130): «Վասիլի նախնիք հայ ծագով ունէին.
ինք վերականգնեց» են. կը գրէ Պետաւիոս (Ա.
մաս, Գիրք 8, Գլուխ 9, էջ 413): Այսպէս երբ
ասդին Վասիլ Բ. կ'ըլլար Բիզանդիոնի կայսր,
անդին ալ պուլկարաց մէջ մեծ համբաւ կը վա-
յելէին երկու կրօնածագ դերջանցի հայ իշխա-
ններ, որոնց հայրը Բիզանդիոնի արքունեաց
մէջ կոմստեթեան աստիճանով պատուուած էր: Եւ
տակալն դերջանցի այս երկու եղբայրներն ալ,
«հարազատ եղբարք Սամուէլ և Մամուէլ՝ ի գա-
ւառէն Գերջանայ, հասին յիշխանութիւն մեծ»
(Չամչեան): Ասոնք սպասամբած էին յունաց
դէմ և միացած պուլկարաց՝ որոնց մօտ մեծ
պատիւներով պատուուած էին «Վասն իւրեանց
քաջութեան», որմէ վերջ՝ ըստ Չամչեանի, Վա-
սիլ ալ աւելի կը նեղէ պուլկարահայերը: Ան չի
խնայեր նոյնիսկ իրենց երկիրը գտնուող ցեղա-
կիցներուն. և Սերաստիոյ Հայաստեաց մետրա-
պոլիտին բամբասանաց վրայ ան շղթայակապ
Պոլիս բերել կու տայ Սերաստիոյ նշանաւոր հա-
յերը իբր հերետիկոս, և անոնցմէ Գաբրիէլ ա-
նուն շատ յարգուած ձերտունի կը մեռնի: Իսկ
գալով մնացեալներուն, անոնք ալ բռնութեան
տակ կը հաւանին մետրապոլիտին կամքը կատա-
րել, այսինքն այլեւս զանգակ չգարնել և ինչ ինչ
եկեղեցական արարողութիւններ փոխել: Բանա-
արկեալներուն մէջ էին նաեւ Լատիսիոյ՝ Յով-
հաննէս և Սերաստիոյ՝ Սիոն երկու եպիսկոպոս-
ները: Այս և ստոր նման գալթակեղեցուցիչ դէպ-
քեր կը գրգռեն հայոց յունատեցութիւնը: 975
— 976ի տեսնները պուլկարաց «Կուրս» (ըստ
Ատդիկի) Չարը գերի կ'իշխայ Վասիլ ձեռքը:
Սամուէլ անմիջապէս ձեռք կ'առնէ առաջնորդի
դերը և պուլկարաց, հայոց և աւարաց համա-
ձայնութեամբ կ'ընտրուի Չար պուլկարաց:

976ին Սամուէլ կը յարձակի Վասիլի յաղ-
թանակով արբեցած և անհոգ բանակին վրայ
գիշերով, սրակոտոր կ'ընէ և Վասիլ հազիւ մա-
զապուրծ կ'ըլլայ: Ասոր վրայ Վասիլ կը ստիպ-
ուի խաղաղութեան դաշինք կնքել Սամուէլի
հետ: Սամուէլ Վասիլի քոյրն ալ իրեն կնու-
թեան կ'ուզէ: Վասիլ թէ կը խոստանայ, սա-
կայն հայաստեաց մետրապոլիտին տագրանքով
իր արքունեաց հարճերէն մին իբր իր քոյրը
Սամուէլի կնութեան կը դրկէ: Սամուէլ կը
հասկնայ դաւը և չափազանց կը նեղուի իր վի-